ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2020թ. պետական բյուջեի լրամշակված նախագծի հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ 2017-2019թթ.









2020 թ. պետական բյուջեի նախագծով. 2020թ. ՀՀ-ում, ՀՆԱ-ի 103% դեֆլյատորի պարագայում, կանխատեսվում է, որ անվանական ՀՆԱ-ն կկազմի 7095.1 մլրդ դրամ՝ 2019 թ. պետական բյուջեով և 2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով (ՄԺԾԾ) կանխատեսված համապատասխանաբար՝ 6756.2 մլրդ դրամի և 6975.4 մլրդ դրամի դիմաց: Ինչը նշանակում է, որ 2020 թվականին ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ 2019 թվականի կանխատեսված ցուցանիշը կգերազանցի 5.01 %-ով, իսկ ՄԺԾԾ-ով կանխատեսված ցուցանիշը՝ 1.01 %-ով:

ՀՆԱ-ի իրական աճը կանխատեսվում է 4.9%, այնքան որքան ծրագրված է 2019 թ. պետական բյուջեով (սպասվում է 6.3%) և ՄԺԾԾ-ով: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը տնտեսական աճի 2020թ. կանխատեսվող ցուցանիշով առաջատար է ԵԱՏՄ գործընկեր-երկրների, Ադրբեջանի և Վրաստանի հետ համեմատությամբ: Մասնավորապես, ՀՀ-ում ՀՆԱ-ի 4.9 % իրական աճի պարարգայում, *ՌԴ-ում կանխատեսվում է ՀՆԱ-ի 1.9 % իրական աճ, Բելառուսի Հանրապետությունում՝ ՀՆԱ-ի 0.3 % իրական աճ, Ղազախստանում՝ ՀՆԱ-ի 3.9 % իրական աճ, Ղրղզստանում՝ ՀՆԱ-ի 3.4 % իրական աճ, Ադրբեջանում՝ ՀՆԱ-ի 2.1 % իրական աճ և Վրաստանում՝ ՀՆԱ-ի 4.8 % իրական աճ:

2020 թ. ՀՆԱ-ի աճին տնտեսության ճյուղերի նպաստման տեսանկյունից առաջատար է ծառայությունների ճյուղը 3.1%-ային կետով՝ 2019 թ. կանխատեսվող 4.1 %-ային կետի դիմաց: 2020 թ. ՀՆԱ-ի աճին դրականորեն են նպաստելու նաև արդյունաբերությունը՝ 0.9 %-ային կետ՝ 0.3 %-ային կետով պակաս քան 2019 թ. համար է կանխատեսվում, շինարարությունը՝ 0.3%-ային կետ՝ նույնքան որքան 2019 թ. համար է կանխատեսվում, զուտ անուղղակի հարկերը՝ 0.6 %-ային կետ՝ 0.1 տոկոսային կետով պակաս քան 2019 թ. համար է կանխատեսվում և գյուղատնտեսությունը 0.1 %-ային կետ՝ այնքան որքան 2019 թ. համար է կանխատեսվում:

*Աղբյուրը Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2019 թվականի հոկտեմբեր ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույց

ԱԺԲԳ









Ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը ՀՆԱ-ում 2020 թ.-ին կանխատեսվում է 39.2%՝ բարելավելով 2019թ. կանխատեսվող ցուցանիշը 1.7 %-ային կետով: Իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծման մասնաբաժինը կավելանա 0.4 %-ային կետով և կկազմի ՀՆԱ-ի 52.8%-ը: Արդյունքում ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ կանխատեսումների 2020 թ.-ին 2019թ. նկատմամբ կբարելավվի 1.3 %-ային կետով և կկազմի -13.3 %:

2020 թ.-ին՝ 2019թ. համեմատ կբարելավվեն նաև ընթացիկ հաշիվ / ՀՆԱ և առևտրային հաշվեկշիռ / ՀՆԱ ցուցանիշները. Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ հարաբերակցությունը 2020 թ. կկազմի -6.0 %՝ 2019 թ. նկատմամբ կբարելավվի 1 %-ային կետով, իսկ առևտրային հաշվեկշիռ / ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի -12.8 %՝ բարելավելով 2019 թ. կանխատեսվող ցուցանիշը -0.9 %-ային կետով:

Միջին գնաճը 2020 թ.-ին կանխատեսվում է 2.1 %-ի մակարդակում՝ 2019թ. ծրագրված 3.5 %-ի դիմաց, իսկ գնաճը ժամանակաշրջանի վերջում 2020թ.-ին կանխատեսվում է 2.5 %՝ 2019 թվականի՝ 3.1 %-ի դիմաց:

2020 թ. պետական բյուջեի նախագծով եկամուտները կանխատեսվում են 1 տրիլիոն 695 մլրդ դրամ, ինչը կազմում է ՄԺԾԾ-ով 2020թ. համար ծրագրվածի 99.1 %-ը և 2019 թ. հաստատված մակարդակի 113.2 %-ը:

2020 թ. պետական բյուջեի նախագծով ծախսերը կանխատեսվում են 1 տրիլիոն 855 մլրդ դրամ, ինչը կազմում է ՄԺԾԾ-ով 2020թ. համար ծրագրվածի 100.4 %-ը և 2019 թ. հաստատված մակարդակի 112.5 %-ը:

2020 թ. պետական բյուջեի նախագծով դեֆիցիտը կանխատեսվում է 160.7 մլրդ դրամ, ինչը 0.24 տոկոսով ավել է ՄԺԾԾ-ով 2020թ. համար ծրագրված ցուցանիշից և կազմում է 2019 թ.հաստատված մակարդակի 106 %-ը:

2020 թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. ծրագրված մակարդակի նկատմամբ կբարելավվի 1.8 %-ային կետով և կկազմի 23.9 %, ինչը սակայն 0.6 %-ային կետով պակաս է քան 2020 թ. համար ծրագրված էր ՄԺԾԾ-ով:

2020 թ. պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. ծրագրված մակարդակի նկատմամբ կբարելավվի 1.8 %-ային կետով և կկազմի 26.2 %, ինչը սակայն 0.6 %-ային կետով պակաս է քան 2020 թ. համար ծրագրված էր ՄԺԾԾ-ով:

ԱԺԲԳ









2020 թ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը 2019թ. ծրագրված մակարդակի նկատմամբ կավելան 0.1 %-ային կետով և կկազմի - 2.3 %, ինչը համապատասխանում է 2020 թ. համար ՄԺԾԾ-ով ծրագրված մակարդակին:

2020 թ. պետական բյուջեի նախագծով եկամուտները ձևավորվել ու են՝

- հարկային եկամուտներից և պետական տուրքերից՝ 1 տրիլիոն 602.2 մլրդ դրամ, որը կազմում է ՄԺԾԾ-ով 2020 թ. համար սահմանված մակարդակի 98.8 %-ը և 2019 թ. հաստավածի 14.3 %-ը,
- պաշտոնական դրամաշնորհներից՝ 35.4 մլրդ դրամ, որը կազմում է ՄԺԾԾ-ով 2020 թ. համար սահմանված մակարդակի 114.2%-ը և 2019 թ. հաստավածի 89.6 %-ը,
- այլ եկամուտներց՝ 57.4 մլրդ դրամ, որը կազմում է ՄԺԾԾ-ով 2020 թ. համար սահմանված մակարդակի 97.1%-ը և 2019 թ. հաստավածի 104.2 %-ը,

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաերակցությունը 2020թ. պետական բյուջեի նախագծով կանխատեսվում է 22.6 %, ինչը թեև 2019 թ. ծրագրված մակարդակը գերազանցում է 1.9 %-ային կետով, բայց ՄԺԾԾ-ով 2020 թ. համար սահմանված մակարդակից ցածր է 0.6 %-ային կետով:

2020 թ. պետական բյուջի նախագծով ընթացիկ ծախսերը ծրագրվել են 1 տրիլիոն 568 մլրդ դրամ՝ 9.8 %-ով ավել քան 2019թ. հաստավածը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 287.7 մլրդ դրամ, 30.7 %-ով ավել քան 2019թ. հաստավածը:

2020 թ. պետական բյուջի նախագծով ընթացիկ ծախսերը կազմում են ամբողջ ծախսերի 84.5%-ը՝ 2019թ. հաստատված 86.6 %-ի դիմաց, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 15.5 %՝ 2019թ. հաստավածի 13.4 %-ի դիմաց: Հատկանշական է, որ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը) ծրագրվել են 287.7 մլր դրամ, որը 2019. հաստատված չափը գերազանցում է 30.7 %-ով կամ 67.6 մլրդ դրամով:

2020 թ. պետական բյուջեի նախագծում կապիտալ ծախսերը , որոնք կազմում են 287.7 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 4.1%-ը, գերազանցում են պակասուրդին (160.7մլրդ դրամ), ինչը վկայում է հարկաբյուջետային կանոնների պահպանման մասին:

ԱԺԲԳ









2020 թ. պետական բյուջեի նախագծում՝

- 361.6 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, որը 14.5 %-ով ավել է քան հաստատվել էր 2019թ. պետական բյուջեով և 29.8 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- 195.4 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել տնտեսական հարաբերությունների բաժնին, որը շուրջ 46.5%-ով ավել է քան հաստատվել էր 2019թ. պետական բյուջեով և 74.2 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- 308 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել պաշտպանության բնագավառին, որը 1.3 %-ով պակաս է 2019թ. պետական բյուջեով հաստատված մակարդակից, բայց 29.1 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- 152.5 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին, որը 9.8 %-ով ավել է 2019թ. պետական բյուջեով հաստատված մակարդակից և 23.9 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- 12.3 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել շրջակա միջավայրի պաշտպանությանը, որը 3.7 %-ով ավել է 2019թ. պետական բյուջեով հաստատված մակարդակից և 95.8 %-ով գերազանցում է 2018թ. փաստացին;
- 22.9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին, որը 27.1 %-ով ավել է 2019թ. պետական բյուջեով հաստատված մակարդակից և 95.8 %-ով գերազանցում է 2018թ. փաստացին;
- 113.7 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել առողջապահությանը, որը 24 %-ով ավել է 2019թ. պետական բյուջեով հաստատված մակարդակից և 42.9 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- 492 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել սոցիալական պաշտպանությանը, որը 10.8 %-ով ավել է 2019թ. պետական բյուջեով հաստատված մակարդակից և 18.1 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր:

ԱԺԲԳ









2020 թ. պետական բյուջեի նախագծում՝

- 161.1 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել կրթության բնագավառին, որը 13.6 %-ով ավել է քան հաստատվել էր 2019թ. պետական բյուջեով և 32.5 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- 30.9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին, որը 2 %-ով ավել է քան հաստատվել էր 2019թ. պետական բյուջեով և 22.2 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- 5.1 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր բաժնին, որը 41.9 %-ով պակաս է 2019թ. պետական բյուջեով հաստատված մակարդակից և 85.1 %-ով պակաս է քան 2018թ. փաստացին էր:

2020 թ. պետական բյուջեի նախագծով, կանխատեսվում է՝

- ՀՀ պետական պարտքը կկազմի 3 տրիլիոն 636 մլրդ դրամ, որը 0.7 %-ով ավել է 2019թ. կանխատեսված մակարդակից և 8.6 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 2 տրիլիոն 760 մլրդ դրամ, որը 4.1 %-ով պակաս է 2019թ. կանխատեսված մակարդակից, բայց 3.1 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- ՀՀ ներքին պետական պարտք կկազմի 875 մլրդ դրամ, որը 19.2 %-ով ավել է 2019թ. կանխատեսված մակարդակից և 30.1 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կկազմի 7 միլիարդ 630 մլն , որը 2.8 %-ով ավել է 2019թ. պետական բյուջեով ծրագրվածից և 10.2 %-ով ավել է 2018թ. փաստացիից;
- ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 5 մլրդ 793 մլն ԱՄՆ դոլար, որը 2.06 %-ով պակաս է 2019թ. կանխատեսվածից, բայց 4.7 %-ով ավել է քան 2018թ. փաստացին էր;
- ՀՀ ներքին պետական պարտք կկազմի 1 մլրդ 837 մլն ԱՄՆ դոլար՝ 21.7%-ով ավել 2019թ. կանխատեսվածից և 3216 %-ով 2018թ. փաստացից;
- ՀՀ կառավարության պարտքը կկազմի 3 տրիլիոն 419 մլրդ դրամ, որը 6 %-ով պակաս է քան ծրագրվել է ՄԺԾԾ-ով, 1.6 %-ով ավել է 2019թ. կանխատեսվածից և 10.9 %-ով ավել է 2018թ. փաստացից;

ԱԺԲԳ









- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կկազմի 216 մլրդ դրամ, որը 12.9 %-ով պակաս է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 18.8 %-ով պակաս է 2018թ. փաստացից;
- ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 7 մլրդ 176 մլն, որը 3.8 %-ով ավել է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 12.6%-ով ավել է 2018թ. փաստացից;
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 454 մլն, որը 11 %-ով պակաս է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 17.5 %-ով պակաս է 2018թ. փաստացիից;
- ՀՀ կառավարության արտաքին պարտքը կկազմի 2 տրիլիոն 544 մլրդ դրամ, որը 9.1 %-ով պակաս է քան ծրագրվել է ՄԺԾԾ-ով, 3.3 %-ով պակաս է 2019թ. կանխատեսվածից և 5.5 %-ով ավել է 2018թ. փաստացից;
- ՀՀ կառավարության ներքին պարտքը կկազմի 875 մլրդ դրամ, որը 4.4 %-ով ավել է քան ծրագրվել է ՄԺԾԾ-ով, 19.2 %-ով ավել է 2019թ. կանխատեսվածից և 30.1 %-ով ավել է 2018թ. փաստացիից;
- ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 5 մլրդ 793 մլն, որը 2.06 %-ով պակաս է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 4.7%-ով ավել է 2018թ. փաստացիից;
- ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 1 մլրդ 837 մլն, որը 21.7 %-ով ավել է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 32.16%-ով ավել է 2018թ. փաստացիից;
- ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 51.2 %, որը 2.3 %-ային կետով պակաս է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 4.6 %-ային կետով պակաս է 2018թ. փաստացից;

ԱԺԲԳ

ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ (%)





ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ (%)



ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ (%)



- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 48.2 %, որը 1.6 %-ային կետով պակաս է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 3.2 %-ային կետով պակաս է 2018թ. փաստացից;
- ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքը կկազմի 25.6 %՝ 1.6 տոկոսային կետով պակաս քան 2019թ. ծրագրվածն է, բայց 3.8 տոկոսային կետով ավել քան 2018թ. փաստացին էր: Հատկանշական է, որ այս ցուցանիշը համահունչ է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարական ծրագիր ուղենշային ցուցանիշին, ըստ որի ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքի պարտքը պետք է լինի առնվազն 20 %;
- ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 38.9 %, որը 3.7 %-ային կետով պակաս է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 5.7 %-ային կետով պակաս է 2018թ. փաստացիից;
- ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 35.9 %, որը 3 %-ային կետով պակաս է քան ծրագրվել էր 2019թ. պետական բյուջեով և 4.2 %-ային կետով պակաս է 2018թ. փաստացից:

*Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ 2017-2018թթ. պետական բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, ՀՀ 2019 թ. հաստատված պետական բյուջեն, ՀՀ 2020 թ. պետական բյուջեի լրամշակված նախագիծը, 2020-2022թթ. ՄԺԾԾ-ն և ՀՀ վիճակագրական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության կայքի տվյալները ՀՀ պետական պարտքի վերաբերյալ և Արժույթի Միջազգային Հիմնադրամի 2019 թվականի հոկտեմբեր ամսվա Համաշխարհային տնտեսական հեռանկարների զեկույցը: